ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մարտի 19-ից 22-ը Կորեայի Հանրապետություն
գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք. Բուսան (Կորեայի Հանրապետություն), մարտի 18-ից 23-ը

4. Հրավիրող կողմը՝

Կորեայի Հանրապետության մաքսային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել Եվրասիական պետությունների (Լիբանանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Յեմենի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Հորդանանի Հաշիմյան Թագավորության, Ալբանիայի Հանրապետության, ԻԻՀ, Թուրքիայի Հանրապետության, Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության, Բոսնիա և Հերցոգովինայի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության և Ուզբեկիստանի Հանրպաետության) մաքսային մարմինների ղեկավարների համար կազմակերպվող Առևտրի դյուրացման քաղաքականության հերթական 3-րդ աշխատաժողովին, Առևտրի դյուրացման վերաբերյալ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) համաձայնագրի շրջանակներում ամրապնդել փոխադարձ համագործակցությունը, ինչպես նաև քննարկել առեւտրի դյուրացման և փորձի փոխանակման նոր նախաձեռնությունները և հետագա զարգացման ուղիները:

6. Քննարկված թեմաները

Քննարկվել են առևտրի դյուրացման հետ կապված հետևյալ հարցերը.

- «Մեկ պատուհան» համակարգի կիրառումը՝ մաքսային ընթացակարգերի պարզեցման և դրանց իրականացման ժամկետների կրճատման նպատակով:
- Ռիսկերի կառավարում
- Մաքսային հսկողության ուղիների ընտրությունը նախնական տեղեկատվության էլեկտրոնային վերլուծության արդյունքում:
- Լիազորված տնտեսական օպերատորներ
- Արտաքին տնտեսական գործունեության բարեխիղճ մասնակիցներին մաքսային մարմինների կողմից տրամադրվող իրավունքները և պարզեցումները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեղի է ունեցել հանդիպում Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության հանձնակատար Կիմ Յանգմունի հետ: Քննարկվել են երկկողմանի համագործակցության հետ կապված հարցեր, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրի նախագծի որոշ դրույթների վերաբերյալ, տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև համաձայնագրի ստորագրման հետ կապված:

Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության հանձնակատարի կողմից հայկական կողմին առաջարկ է ներկայացվել պաշտպանել Կորեայի Հանրապետությունը ներկայացնող Թաեիլ Քանգի թեկնածությունը 2019 թվականին Համաշխարհային մաքսային կազմակերպության Կարողությունների զարգացման գծով տնօրենի պաշտոնում ընտրելու հարցում:

Աշխատանքային կարգով տեղի են ունեցել նաև հանդիպումներ ԻԻՀ մաքսային մարմնի նախագահ՝ Մահդի Միրաշրաֆի հետ, ինչպես նաև Վրաստանի Հանրապետության Մաքսային մարմնի ղեկավար՝ Մամուկա Ջանգուլաշվիլիի հետ:

ԻԻՀ մաքսային մարմնի նախագահի հետ քննարկվել են ԻԻՀ-ից ՀՀ ներմուծվող որոշ մթերքների, մասնավորապես, բանջարեղենի մաքսային արժեքների գոյացման հարցերը:

Վրաստանի Հանրապետության Մաքսային մարմնի ղեկավարի հետ քննարկվել են ս.թ. ապրիլի 8-ից 10-ը ք. Թբիլիսիում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Թմրամիջոցների և Հանցավորության գրասենյակի և Համաշխարհային մաքսային կազմակերպության հետ համատեղ իրականացվող «Բեռնարկղերի հսկողության ծրագրի» շրջանակներում կայանալիք աշխատանքային այցի վերաբերյալ հարցեր:

Աշխատաժողովին ելույթ են ունեցել Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության ղեկավար անձնակազմի ներկայացուցիչները և տարբեր մասնագետներ, որոնք ներկայացրել են Կորեայի Հանրապետության հաջողությունները տնտեսական և մաքսային ոլորտներում, մասնավորապես, պետական համակարգերում, տնտեսության տարբեր ոլորտներում «Մեկ պատուհան» համակարգի ներդրման հետ կապված ներկա իրավիճակը, ծրագրավորված և կատարվող աշխատանքները, բարձր տեխնոլոգիաների կիրառումը տնտեսության բոլոր օղակներում, ծրագրային շղթաների (բլոկչեյների) լայն կիրառմանն ուղղված աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս առավելապես կարճ ժամկետներում իրականացնել տեղեկատվական տեղնոլոգիաների միջոցներով տեղեկատվության հավաքագրման և վերլուծության աշխատանքներ՝ ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառման նպատակով: Ներկայացվել և քննարկվել են նաև տվյալ գործընթացի շրաջանկներում, ինչպես նաև տնտեսական շղթաների բոլոր օղակներում ի հայտ եկած տեղեկությունների հավաքագրման արդյունքում էլեկտրոնային մեծ շտեմարանի ստեղծման, տեղեկատվության, ռիսկերի վերլուծություն, բարձր ռիսկայնության ապրանքների և անձանց թիրախավորման գործընացի արդյունավետ իրականացմանն ուղղված միջոցառումները:

Կորեայի Հանրապետության մաքսային մարմինների մասնագետների կողմից ներկայացվել են նաև Լիզորված տնտեսական օպերատորի (LSO) ինստիտուտի Կորեայում լայն կիրառման վերաբերյալ՝ կարևորելով տարբեր պետությունների միջև LSO-երի փոխճանաչման և փոխադարձ կարգով մաքսային հսկողության համապատասխան գործընթացներում հատուկ պարզեցումների կիրառումը:

Ելույթ են ունեցել նաև Հյուսիսային Մակեդոնայի Հանրապետության մաքսային ծառայության մասնագետները և Թուրքիայի Հանրապետության Առևտրի Նախարարության գլխավոր տնօրենի տեղակալը՝ ներկայացնելով համապատասխանաբար LSO ինստիտուտի և «Մեկ պատուհան» համակարգի կիրառումը իրենց երկրներում:

Կազմակերպվել են ծանուցողական այցեր Կորեայի Հանրապետության Բուսան քաղաքի գլխավոր մաքսատուն և «Hyundai» մակնիշի տրանսպորտային միջոցների արտադրական գործարան ՈՒլսան քաղաքում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Կորեայի Հանրապետության մաքսային ծառայության հանձնակատար Կիմ Յանգմունի հետ հանդիպման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրի շուտափույթ ստորագրման, ինչպես նաև այդ համաձայնագրի պահանջներից բխող տեղեկատվության փոխանակման իրականացման ուղղությամբ:
- Կորեայի Հանրապետության հետ նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն աշխատանքային հրավերով այցելել Կորեա և մասնագետների կողմից մանրամասն ուսումնասիրել Կորեայի Հանրապետության մաքսային լաբորատորիաները, սարքավորումները և այլն: Հրավերը նախատեսված է 2019թ.-ի երկրորդ կեսի համար:
- ԻԻՀ մաքսային մարմնի նախագահ Մահդի Միրաշրաֆի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ աշխատանքային կարգով, օպերատիվ եղանակով իրականացնել ԻԻՀ և ՀՀ սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքների և այլ տեղեկատվության ճշգրտման աշխատանքներ:
- Վրաստանի Հանրապետության Մաքսային մարմնի ղեկավար Մամուկա Ջանգուլաշվիլիի հետ քննարկվել են ս.թ. ապրիլի 8-ից 10-ը ք. Թբիլիսիում իրականացվող

«Բեռնարկղերի հսկողության ծրագրի» շրջանակներում կայանալիք աշխատանքային այցի նախապատրաստման և հայկական կողմի մասնակցությանն առնչվող կազմակերպչական հարցեր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Կորեայի Հանրապետության հաջողությունները տնտեսության տարբեր օղակներում, մաքսային բնագավառում, «Մեկ պատուհան» համակարգի, Ռիսկերի կառավարման և LSO-ի ինստիտուտի կիրառման արդյունավետությունը կարող է ուղեցույց լինել Հայաստանի Հանրապետության համար տնտեսությունում, մասնավորապես, մաքսային բնագավառում բարեփոխումների իրականացման համար համապատասխան միջոցառումների երկարաժամկետ ծրագրեր կազմելու և դրանք արդյունավետ իրականացնելու համար: Համապատասխան ֆիանանսական և տեխնիկական միջոցների ներգրավման դեպքում տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների պետական մարմիններում, տնտեսության տարբեր օղակներում և մաքսային բնագավառում համատարած կիրառումը կարող է կտրուկ նվազեցնել քաղաքացիներից և տնտեսական գործունեություն իրականացնող անձանցից անհրաժեշտ տեղեկատվության պահանջը, մաքսային և այլ մարմինների կողմից վարչարարության իրականացման համար անհրաժեշտ ժամանակը և ֆինանսական միջոցները, մասնավորապես, մաքսային հսկողությունը դարձնելով հնարավորինս աննկատ և պարզեցված:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____